

A GOOD  
ADVERTISING  
MEDIUM

# Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ  
THE CITIZEN

THE ONLY  
ARMENIAN  
PAPER  
Published in  
California.

VOL. I. NO. 16.

FRESNO, CAL. SATURDAY, NOV. 29, 1902.

PRICE, 5 CENTS.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 16.

ՅՐԷՉՆՕ. ՔԱԼ. ՇԱԲԱԹ. ՆՈՑ. 29, 1902

ԳԻՆ 5 ՍԷՆԹ

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ամեն անոնք որ Բաշարացի կըստանան և երեք շաբաթ շարունակ կը պահեն զայն՝ մեր կողմէն կանոնաւոր բաժանորդ կը նկատուին: Իսկ անոնք որ չեն փափաքիր բաժանորդագրուիլ Շարաթաթերթիս՝ կը խնդրենք որ Հաճին զայն մեզ վերադարձնել անմիջապէս, որպէս զի իրենց անունները ջնջենք մեր ցանկէն:

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

—Անցեալ կիրակի օր տեղի ունեցաւ Ս. Երորդութիւն Եկեղեցւոյ անդամոց անդամական ընդհանուր ժողովը՝ նոյն եկեղեցւոյ մէջ՝ ի ներկայութեան 68 անդամոց և ատենապետութեամբ Ս. Մելգոնեանի: Հովուական ընտրութիւն կատարուելով՝ Սահակ Վարդապետ Նաղարեթեան՝ 65 քուէներով ընտրուեցաւ հովիւ քաղաքիս Հայոց: Օրը տարաժամած և ժողովը գոցուելու վրայ էր արդէն երբ անդամներէն մին խնդիր յարոյց թէ առաջնորդարանի մը պէտքը զգալի դորձած էր, և պէտք էր այդ մասին կարգադրութիւն մը ընել: Քանի մը դիտողութիւններէ վերջ՝ որոշուեցաւ՝ այս նպատակաւ չէնք մը կառուցանել՝ եկեղեցւոյ մօտ՝ անոր սեպչական հողին վրայ: Անմիջական հանգանակութիւն մը բացուեցաւ ներկայից մէջ, որոյ գումարը եղաւ 200 տօլարի մօտ: Այս հանգանակութիւնը շարունակելու համար՝ յանձնախումբ մը ընտրուեցաւ որոյ անդամներն են՝ Տրք. Գրիգոր Եանգեան, Յակոբ Ռատիկեան և Գէորգ Յովսէփեան:

—Տիգրան Մանուկեանի փաստարանները՝ անցեալ երկուշաբաթի օր՝ Դատաւոր Օսթընի ներկայացուցին ընդարձակ պատճառագիր մը որով հրաման կը խնդրէին Դատաւորէն յիշեալ Մանուկեանը կրկին անգամ դատի ենթարկելու համար: Դատաւոր Օսթըն 10 օր ժամանակ տուաւ Ընդհանուր դատախազին որ իւր գըրաւոր պատասխանը ներկայացնէ այս մասին՝ վճիռ մը տրուելէ առաջ: Աւելորդ է թերևս ըսել թէ հաւանական չէ որ վճիռը Մանուկեանի ի նպաստ տրուի այս խնդրի մէջ, որ ուրիշ բան չէ՝ եթէ ոչ օրինական կարևոր ձեւակերպութիւն մը՝ Վճռարեկ Ատենին գիմելու համար:

—Գասպար Թաշճեանի ամուսնութիւնը ընդ Օր. Ն. Աղէքսանդրեանի տեղի ունեցաւ Զորեքշաբթի երեկոյ Տրք. Աղէքսանդրեանի սպան մէջ՝ շատ շքեղ կերպով:

ՔԸԹՆԸՐ ԿՕԼՏԵՍԹԻՆ ՔԸՄՓԸՆԻ

Յրէզնոյի ՄԵԾ Խանութը

**KUTNER-GOLDSTEIN**

THE HOUSE THAT SAVES YOU MONEY

Յրէզնոյի լաւագոյն Խանութը

**\*\* ԾՆՈՒՆԴԻ ՆՈՒԷՐՆԵՐ \*\***

Հօրը, Մօրը, Բոլորը, Եղբորը — և ամեն մարդու համար: Մեծ քանակութեամբ ապրանք՝ անկէ ընտրելու համար. ամենափոքր գիններ: Բարի գալուստ նայելու եկողներուն:

Պսակը կատարեց Պաա. Լ. Մ. Ուօլթըրս՝ ժողովական եկեղեցւոյ նախկին քարոզիչը՝ օգնութեամբ Փրօֆ. Մելգոնի: Ըստ աւուր պատշաճի՝ յիշեալ տունը չըքեղապէս վարդարուած էր ծաղիկներով ու անթառամներով. իսկ ճարտական լապտերները հեռուէն կըսէին լուրջայն թէ արտաքոյ կարգի հանդէս մը տեղի կուսնար Տրք. Աղէքսանդրեանի տան մէջ:

Պսակէ յետոյ շատ մը եղանակներ նուազուեցան ամերիկացի նուագածուներու կողմէ. զովարարներ և օշաբակներ բաշխուեցան հանդիսականաց:

Հակիրճ և շնորհաւորական ատենախօսութիւններ ըրին Սահակ Վարդապետ Նաղարեթեան, Մ. Քազանճեան, Պատ. Ուօլթըրս, Տրք. Աղէքսանդրեան, Փրօֆ. Մելգոն և հանդիսի նախահաչը Պրն. Սէքլմեան:

Արտասանութիւններ ըրին Օրիդք. Սուզի Մարգարեան, Բօզ Ֆիլեան և Միքայէլեան: Օր. Ֆիշըր քանի մը սիրուն երգեր երգեց, և Պօզոս Անտոնեան մենախօսութիւն մը ըրաւ՝ մեծ յաջողութեամբ:

Նորասպակ ամուսինները առաւօտեան կառախմբով իրենց սպազայ տունը գնացին ի Րիվըրայտ, ուր Պ. Թաշճեան հաստատուած է քարահատութեան գործով:

—Լսնտոնի Թայմզ լրագրի փարիզեան թղթակիցը կը տեղեկագրէ իր թերթին թէ Մ. տը Փրէսէնսէ՝ անուանի Ֆրանսացին Հայէ մը 5000 Ֆրանք ընդունած է՝ հայ գաղթականներուն օգնելու համար գործածուելու նպատակաւ: Նուիրատուն, որոյ անունը գաղտնի պահուած է, խնդրած է Փրէսէնսէն որ դիմում ընէ Գաղղիոյ արտաքին գործոց նախարարութեան ու թոյլտուութիւն պնդրէ անկէ որ Գաղղիական հիւպատոսներու տրամադրութեան տակ զրուի այդ գումարը՝ իրեն նը-



Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

—0—

—Մարդու մը հասակին բարձրութեանը իւրաքանչիւր ոտնաչափը քսան և վեց փառնու կշռելու է:

—Հասարակ ճեմնակ շապիկ մը կարելու համար առնողը 21000 անգամ իր պաշտօնը կատարելու է:

—Անգղիոյ թղթատարութիւնը կէս միլիոն տղարի եկամուտ մը ունեցած է անցեալ տարի՝ չի պահանջուած Մընի Օրտրնիքէ գոյացած գումարներէն:

—Ոչխարք և արջառք աւելի կը գիրանան երբ առանձինն չապրին:

—Հրացան, սուր և ուրիշ զէնքեր շենելու համար սչխարհի բոլոր գործարանք այնչափ պողպատ չեն գործածեր որչափ կը գործածուի գնտասեղ շինելու համար:

—Մանկիկի մը բռնի սորվեցնելու չէ նստիլ, կենալ և կամ քալել, երբ անոր մկաններն բուսական գորտուոր են՝ բնութիւնը կը սորվեցնէ թէ իրեն ինչ ընել հարկ է: Մանկիկները ազատութիւն վայելելու են: Պզտիկ մը որ կարգիւրի այս կամ այն բանը ընելէ՝ մեծերուն անհանգստութիւն չի պատճառելու համար միայն՝ ջղային կըլլայ անպատճառ: Դու քու վրայ չափէ՝ ինչ պիտի զգայիր եթէ մէկը միշտ հրամայիր քեզ թէ "այս կամ այն բանը պիտի չընես":

—Պարտից ներկայ Շահը սակաւապէտ ըլլալ կ'կործուի: Վաթսուն կին և երեսուն գաւակներ միայն ունի խեղճը: Շատ պզտիկ ընտանիք մ'է այս, երբ մասնաւոր յիշենք թէ նախկին Շահը 1700 կին ունէր 2200 գաւակներ:

—Երբ մարդու սիրտը հոգեբով ծանրաբեռնեալ է, կըսէ կէյ՝ կնկան մը երեւան գալը կը վանէ զանոնք:

\* \* \*  
Փրօֆէսոր Հ. Վ. Փրէնթիս՝ Հօնօն Վարժարանի տեսուչը՝ օր մը քննութեան ժամանակ դասարաններէ մէկէն անցած պահուն՝ պզտիկ տղու մը գրասեղանին առջև կը կենայ ու արձեգրայի գիւրին խնդիր մը կ'առաջարկէ անոր: Տղան չի կրնար լուծել զայն, ու Փրօֆէսորը քիչ մը նեղացած կըսէ տղուն.

—Այդ խնդիր պէտք էր որ կրնայիր զիւրութեամբ լուծել: Ը ըճ Ուաշինկիթըն քու տարիքը եղած ատեն երկրաչափ մըն էր: Այս լսելով տղան՝ երկայն մը Տեսուչին աչքարուն մէջ կը նայի բոպէ մը և կը պատասխանէ.

—Այո, տէր իմ, և ձեր տարիքը ունեցած ժամանակ՝ Միացեալ Նահանգաց Նախագահն էր:

Խօսակցութիւնը դադրած և Տեսուչը անյայտ եղած էր:

\* \* \*  
Շանկայի մէջ բնակող անգղիացի մը համազամ ճաշ մը վայելէլէ վերջ՝ ապուրին համար կը փափաքի մասնաւոր կերպով շնորհակալ ըլլալ իր Չինացի խոհարարին՝ որուն կը հարցնէ թէ ինչով պատրաստած էր զայն:

—Այդ ապուրին մենք Չինացիներս շան ապուր անունը կ'ուստաք և

Տանտիրոջ դուտորը — Սինկ Լի, չըլլայ թէ մեր շուներէ մին մարթած ու անոր մտով պատրաստած ըլլաւ այդ ապուրը:

Սինկ Լի (հպարտութեամբ) — Չէ, Օրիորդ, արդէն միւսած շան մը միսը գործածած եմ:

Ճ. Մ. Սերոբեան, Ճ. Պաննըր, Յ. Մ. Սերոբեան

Սան Ռոքիմի Վալի Լուսա Բօ,

Ճ. ՊԱՆՆԸՐ, Վարիչ:

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւ 954 ԱՅ Փողոց, Ֆրէզնօ, Բալիֆօրնիա: Թէլէֆօն, Մէյն 40

Եթէ կը փափաքիս գնել կամ ծախել մշակուած կամ անմշակ ամեն տեսակ կարուած՝ եկուր և մեզ տես թէ ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել քեզ: Ներկայացուցիչներն ենք շատ մը առաջնակարգ ապահովագրական ընկերութեանց, որոց համար ձեր գործերը կը խնդրենք:

Յ Ր Է Չ Ն Օ

ԼԸՄՊԸՐ ՔԸՄԲԸՆԻ

ԳՐԱՍԵՆԵԱԿ ՈՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻՆ ԱՅ ԿՎԵՆԹՈՒՐԱ ՓՈՂՈՑՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ  
Թէլէֆօն — — — Մէյն 24  
Ֆրէզնօ, ԲԱԼԻՖՕՐՆԻԱ:

Ընտիր կերակուրի համար գևա

Սիթի Պէֆֆըրին

— Ճ. Մ. Բօհլըր և Փիքֆօրթ, Ճաշարանատարք —  
1138 ԱՅ Ըսթրիթ, Ֆրէզնօ, Բալ.

ԳՐԻԳՈՐ Կ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ,  
ԳՈՐԾԱԿԱԼ

ԿԵԱՆՔԻ ԵՒ ԿՐԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ  
Կապահովագրէ մէկէ մինչև եօթանասուն տարեկան անձինք՝ առանց սեռի խտրութեան:

ՊԱՇՏՏՈՆՏԵՂԻ | Ֆրէզնօ Լօն Էնտ Սէյվինկ Պէնք  
| Պիլաինկ, Սիենակ, Թիւ 14 և 15  
Փօսթ Օֆիս Պաքս, 1285  
Ֆրէզնօ, ԲԱԼ.  
Թէլէֆօն, պլու 272

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

ՇԱՐԿԱԹԱԹԵՐԹ

ՃԷՅ Փողոց, Էքսփոզիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի Համար Տարեկան մէկ ու կէս Տոլ. — Վեցամսեայ 75 Սէնթ Ուրիշ Երկիրներու Համար

Տարեկան 10 Զրանդ — — Վեցամսեայ 5 Զրանդ

Կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի թիւ 1033 Բաժանորդագիրը կանխիկ վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ դրամ կը շրկուին խմբագրութեան հետեւեալ հասցէիւ՝

To The Editor of THE CITIZEN P. O. Box 1224 Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published Weekly in the State of California.

H. EGUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year..... \$1 50 | Six Months.....75 Cents

ՅՐԷՉՆՕ, ԲԱԼԻՅՕՐՆԻԱ. ՆՈՅ. 29, 1902

ՊԱՏ. ՅԻԼԵԱՆՆ ՈՒ ԵՐԻՅԱԸԱՆ ՀԱՅՔ

—o—

Հայ Երեցական Եկեղեցւոյ ժողովրդին մէջ խաղաղութիւն գոյացնելու ջանքերը՝ ամառ ժամանակ ստուի վրայ բանդակուած պատկերի մը բաղդին արժանացած ըլլալ կը թուի:

Հաշտարար Յանձնախումբը շարժուա մէջ Պատ. Յ. Ֆիլեանի յանձնեց վերջապէս երեք հարիւր տուարի չափ դրամ՝ անոր հին ու նոր պաշանջներու փոխարէն՝ սա հաստատուն համոզմամբ թէ իր պաշանջները ստանալէ վերջ՝ Պատուելին ինչպէս նաև իր համախոհ Երէցները ( Էլտըր ) պիտի հրաժարէին՝ երկու հատուածներու մէջ կանխաւ գոյացած համաձայնութեան մը համեմատ:

Ամեն մարդ ուրախ էր որ Հայ բողոքական Եկեղեցին՝ փոխանակ անհատական կոնիներու թատերարեմ մը ըլլալու՝ պիտի սկսէր իր իրական նպատակին ծառայել: Բայց "տունին հաշիւը շուկան չէին" կըսեն: Պատ. Ֆիլեանի և իր համակիրներու նպատակն է եղեր ժողովրդի գլխին օրինականութիւն ու աննախանձելի խաղ մը խաղալ. և կը թուի թէ յաջողած են իրենց քննադատելի նպատակին մէջ: Ժողովրդի հակաֆիլեան դասակարգէն հանգանակուած այս երեք հարիւր տուարը ստանալէ վերջը՝ քարոզիչ պատուելին, ինչպէս նաև իր համախոհները՝ փոխանակ հրաժարելու՝ կը պնդեն թէ որոշած են իրենց պաշտօնը շարունակել հաւատարմարար, և թէ բարեսէր պատուելին յանձն պիտի առնէ ձրի

և ազգասիրարար քարոզել իր սիրելի ժողովրդին՝ եթէ սա վերջինս անկարող իսկ ըլլայ վճարել իրեն: Այս ալիս կ'սկսեն իրենց և ատելութեանց նոր շրջան մը բացուած լինիլ կը թուի ժողովրդին առջև: Արդարև ցաւալի է յոյժ. բայց իրաց ներկայ վիճակը դարմանելու համար ոչ ոք կրնայ լաւագոյն ու նոր միջոց մը թելադրել՝ քանի որ Պատ. Ֆիլեան, որոյ շուրջը կը դառնան այս բոլոր դժուարութիւնները սկիզբէն ի վեր, կը մերժէ հրաժարիլ իր պաշտօնէն յարմար ամբողջ ժողովուրդ մը գրէթէ՝ իրեն գէտ զրգուած է իր յախուտն ընթացքով: Պատ. Ֆիլեան՝ ի սէր խաղաղութեան՝ հրաժարելու էր ամպիննէն այն իսկ պահուն երբ քանի մը հակառակող միայն երեւան ելան ժողովրդին մէջ. իսկ հիմայ, իրաց ներկայ վիճակին մէջ՝ տակաւին իր պաշտօնին վրայ պնդելը՝ ոչ միայն Քրիստոսի խաղաղութիւնը քարոզող պաշտօնէի մը, այլ պարզ մահկանացուի մը անգամ չի վայելեր բնաւ:

Շատ ցաւալի իրողութիւն մ'է թէ Երեցական Եկեղեցիները կառավարող օրէքին համաձայն՝ ժողովուրդը իշխանութիւն շունի՝ առանց իր Էլտըրներու հաւանութեան՝ հրաժարեցնել իւր քարոզիչ պաշտօնեայն՝ որոշեալ պայմանաժամէն առաջ: Եւ որովհետև այս խնդրի մէջ բոլոր Էլտըրները համախոհ են Երկնային Լոյսերու հեղինակին՝ ուստի ժողովուրդին կը մնայ վայելել Պատ. Ֆիլեանի անփափաքելի ներկայութիւնը՝ մինչև որ տարեշրջանը քանայ:

Բայց սակայն այս քաջ Հովիւր, որ ցարդ սորված ըլլալու էր "կեանս իւր դնել ի վերայ ոչխարաց իւրոց" պիտի շարունակէ՞ աւելի յառաջ երթալ այս իր բռնած ճամբուն մէջ: Ոչ ոք կրնայ տարակուսիլ թէ այս ընթացք աւելի եւ աւելի վարկաբեկ ընելու կը ծառայեն Երկնային Լոյսերու հեղինակը թէ՛ հայ և թէ՛ ամերիկացի հասարակութեան մէջ:

Բարեհաճէ՛ հրաժարիլ, Պատուելի Ֆիլեան, և այդով ցոյց տուր թէ կը փափաքիս ժողովրդի խաղաղութեան:

\*\*\* ՈՍԿԵՓՈՐԻԿ \*\*\*

- \*\* Ամեն տեսակ սերմեր՝ Թ. Ճ. Համբնտի քով:
- \*\* Միաք Մ. Նշիկեան — Թարմ նպարեղէններ, թէյ, սուրճ, շաքար, ծխախոտ, և այլն:
- \*\* Եթէ կուզես հաւերուդ հաւելի՞ ածել տալ բոնի կերպով՝ Տըթ. Նշիկեանի Հնարած Միտէնտ Փօլթրի Ֆիտէն գնէ անոնց համար:
- \*\* Սամուէլ Միւլիմանեան եթէ իր հասցէն գիտցնէ մեզ՝ կարևոր լուր մը կը հաղորդենք իրեն:
- \*\* Բարսեղեան եւ Էփտէրեան ծանօթ դատը տեսնուեցաւ վերջապէս: Հարցաքննութիւնք տեւեցին՝ ընդ ամէնը՝ շարաթէ մը աւելի: Անցեալ երկուշրթի երկու կողմի փաստաբանք ինդիրը քրքրեցին ու բացատրեցին մանրամասնաբար և յանձնեցին զայն դատաւորին՝ վճելու համար: Դատաւոր Չըրչ իճիւրը վերապահեց: Ընթերցողք կը յիշեն անուշտ թէ՛ այս դատով Տըթ. Բարսեղեան 1035 սուրբ կը պաշանջէր Պրն.

Էփտէրեանէ՛ այս վերջնոյ հանգուցեալ որդին՝ Միհրան Էփտէրեանը խնամած ըլլալուն համար:

\*\* Կարապետ Պէյքըն ( Պէյքեան ) քանի մը ամիսներ առաջ դատ մը սկսած էր Քըրնիի ընկերութեան դէմ, որմէ կը պահանջէր 600 տօլարի չափ վնաս մը զոր կրած էր այս վերջնոյ գործաւորաց անհոգութեան պատճառաւ: Այսինքն՝ Քըրնիին արօտատեղիները ջրած ժամանակին՝ մեծ առուի մը բերանը բաց թողուցեր էին անհոգութեամբ, անանկ որ ջուրերը՝ ամբողջ օր մը և գիշեր մը՝ Պէյքընի այգիին մէջ վազած ու խաղողները վնասած էին: Պէյքըն խնդիրը քաղցրութեամբ վերջացնելու համար ամեն կարելի միջոց փորձելէ վերջ բողոքեց յիշեալ ընկերութեան վերայ: Դատը տեսնուեցաւ Դատաւոր Օսթընի առջև՝ բաւական ժամանակ առաջ: Անցեալ Շարաթ օր Դատաւոր Օսթըն իր վճիռը տուաւ վերջապէս ի նպաստ Պէյքընի, որուն վնասը սահմանած է 375 տօլարի միայն:

\*\* Թնդանօթ շինող Գերմանացի աշխարհահռչակ Քրուսիք, որոյ պատրաստած ահուելի գործիքներով անթիւ մարդիկ մեռած են աշխարհի ամէն երկիրներու մէջ, անցեալ շարթու մեռաւ յանակնկալս, ու թաղուեցաւ արքայավայել չքով: Այս մարդը կրէ եղեր թէ իր երկաթի գործարաններէն արտադրուած գործիքներուն ու ձուլածոյներուն ինը տասերորդը աշխարհս քաղաքակրթելու կը ծառայեն եղեր—ինչպէս երկաթուղիի գծեր, կառքեր, զանազան մեքենայներ և այլն—իսկ անոնց մէկ տասերորդը կը ծառայէ եղեր կեանք փրճացնելու: Քրուսիք երկինք պիտի երթայ թէ գժողք:

Կրտսի թէ Թնդանօթի այս թագաւորը, որ շատ մը բարեգործութիւններ ալ կրնէ եղեր՝ մանաւանդ իր գործաւորաց, անձնապանութիւն գործած է, որովհետեւ Ուօրվրտս անուն ընկերվարական թերթը վերջերս շատ խիստ կերպով քննադատած է եղեր զինքը և իր բարեգործութեանց իրական բնութիւնը: Մարդիկ իրենց կեղեքիչներէն պիտի ազատէին շուտով եթէ Լըրագրական քննադատութիւնք այս տեսակ՝ ազգեցութիւն գործէին միշտ շարագործներու վրայ:

Միւս կողմէն անձնապանութեան յարը կը հերքուի հանգուցելոյ ընտանեաց, անդամներուն ու մերձակայ ազգականներու կողմէ: Իսկ մենք գոհ ենք գիտնալ թէ վերջապէս Քրուսիք մեռած է:

\*\* Պ. Սողիկեան Ֆաւլըրի կողմերը իր ունեցած 20 աշտավար այգին վաճառեց իր փեսային, և մի և նոյն ժամանակ գնեց ուրիշ այգի մը՝ 80 արտավարնոց:

\*\* Անցեալ Հինգշաբթի երեկոյ տեղի չունեցաւ Գրադարտնի Միութեան ընդհանուր ժողովոյ նիստը, որովհետեւ անդամները, որք ընդհանրապէս թոյլ են ժողովի գալու, կը թուի թէ Շնորհակալութեան օրը տօնելով զբաղած էին:

\*\* Հէվրիլէն Կարապետ կամ Նիկողայոս Պոյաճեանի նամակ մը կայ խորագրատունս, ուսկից յիշեալներէ ո և է մին կրնայ գալ ու առնուլ զայն:

ՀԱՒԿԻԹԸ ՀԱՒԷՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ

—o—

Տքթ. Բիւզանդ Նշիկեան հաւի համար կուտ մը հընարած ու ի վաճառ հանած է ծամանակէ մը ի վեր: Այս նոր կուտը, որ ոչ միայն հաւերը կը պիրցնէ՛ այլ և հաւկիթ ամել կուտայ անոնց, կը գործածուի այժմ թէ Միացեալ Նահանգներուն ամեն կողմերը, և թէ Քանադայի և Անգղիոյ մէջ, ուր մեծ ընդունելութիւն գըտած է: Մանրակրկիտ քննութեամբ հաստատուած է թէ մէկ սէնթի այս նորահնար կուտով՝ չորս սէնթ աւելի արդիւնք կարելի է ձեռք բերել՝ մանաւանդ այս եղանակին երբ երկրորտասանակ մը հաւկիթը դիւրին է ծախել 25 սէնթի: Կարծէ փորձել այս կուտէն, որ կը ծախուի քաղաքիս մէջ՝ Քըմնըր և Կրաֆթ վաճառատուններու մէջ. անոր անունն է Միտլէնտ Փօլթրի Ֆիտ: Գիտնալու է թէ հասարակ ցորենի գնէն շատ տարբերութիւն չունի այս հատիկին գինը: Շատեր փորձած ու գոհ մնացած են անկէ ամէն կերպով: Շատ վկայութիւններ տրուած են այս մասին: Այս վկայութեանց մէկ բովանդակութիւնը պիտի հրատարակուի քիչ ատենէն առանձին հատորով: Գնելէ առաջ յիշելու է թէ այս հատիկներուն տարբեր տեսակները կան: Գնած ժամանակ ըսելու է թէ ձեր ուղածը հաւ գիրցնելու պիտի ծառայէ՝ թէ հաւկիթ ամել տալու համար: Անունը չը մոռնաք:

M I P r t P d

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՍՍԵՐԻԿԵԱՆ ՃԱՇՏԱՐԱՆ

1249 Այ փողոց, Ֆրէզնօ, Քալ.

Թորոս Չրաքեան — — — Ճաշարանատէր  
Յարգանք կը ծանուցանէ իր յաճախորդներուն և հայ հասարակութեան թէ իր նախկին՝ ճէյ փողոցի ճաշարանէն փոխադրուած է յիշեալ խանութը, ուր նորանոր կարգադրութիւններ ու յաւելումներ ըրած է: Կերակուրներու գնին վրայ թէ և յաւելում մը չէ եղած, բայց մաքրութիւն, առատութիւն և ընտիր կերակուր տալ կարենալու համար ամեն նախապատրաստութիւն եղած է, անանկ որ ոչ ոք պիտի անշնայ զայն Հայկական ճաշարան մը անուանելու: Փորձեցէ՛ք մի անգամ:

Կուզենք որ ձեր գնելիք պատի թողթերը, ներկ ու պատկերի շրջանակները մեզմէ ծախու առնէք: Գներու հետ ընտրութեան իրաւունք: Պատի թուղթեր կը փակցունենք, ու կը ներկենք:

Supplies to Ship, 1153-1155 Այ փողոց, Էլեմքըրի կիցը:

Վ. ՓԱՐՔԸՐ ԼԱՅԸՆ,  
Կրակարարանեաց Թագաւորը ի  
Ֆրէզնօ, Քալիֆորնիս

# ՍԱՆԹԱ ՖԻ

**\*\* ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒ ԼՍԻԱԳՈՅՆ ԳԻԾԸ \*\***

Ճամբորդին համար ամեն հանգրաւս և զխրութիւն

Սանթա Ֆի երկաթաղեաց ճամբան շուտապէս, կարճ ու ամենէ արագն է՝ արեւելք երթալու կամ արեւքէ հաս դալու համար:

Ուղղակի շոգենաւային և երկաթաղի տոմսեր Հին Աշխարհի ամեն կողմերուն և ամեն կողմերէն գալու համար: Տոմսի գրամները կրնան հաս վճարուիլ, եթէ տոմսերը չի գործածուին՝ գրամը



ես կը արուի: Սան Ֆրանսիսկո երկաթաղու շուտապէս ճամբան է այս: Տեղեկութիւններ սիրով կը արուին թէ՛ կայարանը և թէ՛ քաղաքի գրասենեակը՝ Ի թիւ 1031 ձէյ փողոց, Ֆրէզնո: Թ. Ա. ՃՕՆՍ, Գրծկու

## Ս Ա Ն Թ Ա Ֆ Ի

Երկաթաղեաց Ընկերութիւն

### Ֆ Ր Է Չ Ն Օ

ԸՆՏՐՐԹԷՅՔԻՆԿ ՓԱՐԼԸՐՍ

ՇԱՆՆԸՆ և ՊԻԼ, ՏԵՐԵՐ

1154 ձէյ փողոց, — Ֆրէզնո. — Թէլէֆոն Մէյն 160

### ՏԱՆԻՀՈՒ, ԷՄԸՆՍ ԵՒ ԸՆԿ.

ՉՈՒԼԱԾՈՆԵՐ, ԵՐԿԱԹ, ՊՈՂՈՊՍՏ, ՄԵՏԱՂ

Երկաթագործներու և Մեքենագործներու վերաբերեալ ամեն տեսակ պիտոյքներ, Վառարան, Թիթեղեղէնք.

ԵՐԿԱՆԻՒՆԵՐ ՈՒ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Ելեքտրական սարանքներ ու 'ֆլըմինկ'

ԱՅ և Մարիփոզա փողոցներու անկիւնը, Ֆրէզնո.

### ՕՔԹԱՎ ՏԱՐՃԷԼԻՍ

Գաղղիական Հացագործ.

ԿԸ ՎԱՃԱՌԷ ՆԱԵԻ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏԻՐ ԳԻՆԻ

1318 Քէյ փողոց — — — Ֆրէզնո, Քալ.

### ՏՔՔ. Յ. Հ. Բարսեղեան

ՅՐԷՉՆՕ ԼՕՆ ԷՆՏ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԱՆԻ ՊԻԼՏԻՆԿ

Սենեակ 16 17, Թէլէֆոն Պու 492, Ֆրէզնո Քալ.

### Պարնոք Ըսրէյալըս,

ԷԼ և Ֆրէզնո փողոցներ, Պարտիզին զիմացը

Թէլէֆոն, մէյն 174 — — — — Ֆրէզնո

Վարձու կառքեր, ճամբորդներու ձիերուն հոգատար բաժին: Գնել և ծախել: Բոլոր գիշերը բայ ենք:

# ԵՍ ԵՒ ԴՈՒՆ

Թէ ձմրան օրեր երկինքը ամպա՛ս՝  
Անձրևը անոր աչքերէն հոսի,  
Լայկան տիեզերք՝ սև մերամաղձոս՝  
Տխրութիւն սփռէ, արամութիւն խօսի.

Բայց ուրախ եմ ես, զուարթ և արթուն,  
Քանի որ կապրինք մէկտեղ ես ու դուն:

Թէ ազբատ ըլլամ՝ սեղանս համեստ,  
Զի կրնամ ապրիլ չքեղ ու փարթամ.  
Օրսոյ ահիկ մը շինելու համար  
Հոգ չէ թէ ուրե՛ր ստիպուիմ երթամ.

Խրճիթս ինձի պալատ կըլլայ տուն  
Երբոր հոն մէկտեղ կապրինք ես ու դուն:

Եթէ այս կեանքի ճամբան փշերով  
Ծածկուած ըլլայ՝ ճանապարհ անել.  
Թէ մարդիկ կարծեն այս ճամբէն ոչ ոք  
Կարող է անցնիլ՝ զայն զլուխ հանել.

Ես անկէ կանցիմ ուրախ և խնդուն  
Երբ կընկերանանք մէկտեղ ես ու դուն:

Եթէ փոթորիկ գայ և խորտակէ  
Մեր կեանքի պարտէ՛լ ծառ, ծաղիկ, բոյսեր,  
Անյաջողութիւնք թէ գան ջախջախեն  
Մեր սկիւկալած ապագայ յոյսեր.

Բնաւ չի վողեր արայունք իմ աչքէս,  
Զի պիտի կուսինք մէկտեղ դուն ու ես:

Թէ բողբոջ խոժոռ երես զարձնէ՛  
Կուսի մեզի գէ՛մ իր բոլոր ուժով,  
Արգելքներ հանէ մեր ճամբուն վրայ՝  
Մեզ ջախջախելու մի միայն յոյսով.

Բաղդին գէ՛մ կուս կը մղեմ ընդ քեզ,  
Անոր կը յողթենք անշուշտ դուն ու ես:

Թէ բողբոջն նաւը ալեաց կատաղի  
Խաղաղիք գառնայ՝ ծովերը գոռան.  
Թէ ծուրի ծուրի առագաստք պատուին,  
Ճամբորդք արտասուեն աղօթք ի բերան.

Ես չեմ երկնչիր, ոչ տխուր երես,  
Քանի որ մէկտեղ կըլլանք դուն և ես:

Երբ օր մը մահուան անկողին մտնեմ՝  
Յուրա քրտինք վազեն յոգնաթոր ճակատէս,  
Երբ մահու հրեշտակ անարիս վերև  
Կեցած՝ զիս բաժնել ուզէ այս կեանքէս,

Ես ուրախ սրտով ննջեմ վերջի բուն  
Երբ գլխիս վերև անքուն հսկես դուն:

Հ. Է.

# GEORGE BROS.

—0—

ՀԱՂՈՒՍՏՆԵՐՈՒԻ, ԳԼԽՈՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍՍԿ

ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎՍՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳԻ ԳԵՐՉԱԿՆԵՐ.

1109 ՃԷՅ Փողոց, —Ֆրէզնօ Պլաք— Ֆրէզնօ  
Թէլէֆօն — — — Ուայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ արդէն թէ այս խանութին մէջ ծախսուած ամէն սպարանք իրենց տեսակներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ քիչեր գիտեն թէ իրենց գիները՝ բաղդատարար ուրիշներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և վստահացնէք զուրք զձեզ այս կարեւոր կէտին համար. անկէ յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է ստանալ ձՕՐՃ ԵՂՐԱՅՐՆԵՐԻՆ:

# ՍԻՐԱՀԱՐԱԿԱՆ

—0—

Երիտասարդ տղան աղջիկ մը կը սրիէ —Այդ իրեն գիտնալիք գործն է: Գեռատի աղջիկը երիտասարդ մը կը սիրէ —Այդ ալ անոր գիտնալիք բունն է: Ասոնք որ մը կամուռնանան ու պէտքը կըզգան

# ՓԱՅՏԻ ԵՒ ԱԾՈՒԽԻ

ԱՅԴ ԱԼ ՄԵՐ ԳՈՐԾՆ Է

*Sorushy Pashkanyan* Ընկ

ՆՊԱՐԵՂԷՆ, ԵՐԿԱՍԵՂԷՆ, ԽՈՏ, ԳԱՐԻ ԵՒՆ.

Ֆրէզնօ և ԱՅ Փողոցներու անկիւնը

# Վարձու երկիր

Երեսուն արտավար ստաճնակարգ այգի մը կայ վարձու: Մանրամասնութեանց համար զիմել խմբագրատունս:

# Քասալի Եղբայրներ

Կը ծանուցանեն թէ այս տարի ևս կակնկարեն ընդունիլ Հայ աղքատներու արտադրած պտուղներն և՛ կը վստահանեն թէ ամէն յանախորդոզ պիտի մնայ այս ծանօթ տունէն:

# J. K. ELLEZIAN

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Նպարեղէններու, պտուղի, սիկարի, ծխախոտի, թէյի, սուրճի, պէյքինկ փավ տըրի, ձիթաւիղի ևն.

1145 ԱՅ փողոց —Ֆրէզնօ— Թէլէֆօն Պլաք 773

# Քննիքի իրաւունք

(Գամբուլիոս)

Բ.

Վարպետը կըսէ "Կամբոյ ճշմարտութեան շաղին մէջ ընթանալու է. այդ իսկ է առաքինութիւնը:— Ես պատմիչ մ'եմ, և ոչ հեղինակ. ուսուցիչ մը՝ անվհատելի, դատարարակ մ'առանց վարձատրութեան. բարեկամը իր աշակերտներուն, երկրին, ազգին և հանուր մարդկութեան: Կը լսեք թէ չար չեմ խօսիր. չեմ պարծենար. գերբնական կարողութիւն չունիմ. կը պարծենամ ստիպան ու կը տքնիմ բարոյական մարդ մը լինիլ ու մեռնիլ: Միտաւար եմ նախնեաց. և կը համարձակիմ հաւատարել գիտ փանկի, որ գիտութիւնը կամբարէր՝ զիտութեան սիրոյն համար. կուսանէր՝ առանց սղմակի. կը դատարարակէր՝ առանց տաղու կայնելու: Ասոնց ս'ըր ինձ կը պատկանի՝ զատեցեք:—Որ և է պարագայի տակ մի չափազանցեք, և ոչ ալ անհոգ գտնուեցեք:—Արդարև մեծ է այն պաշտօնեան որ սիրով կը ծառայէ հաւատարմութեամբ, իսկ երբ կըզգայ թէ անկարող է լաւագոյն ծառայել՝ կը հրաժարի. այդ է պաշտօնէի մը բարոյականը:

Նահանգի մը կառավարիչը կը գանդատի որ մը Վարպետին թէ աւագակութիւնը ընդարձակած է իր գաւառին մէջ, և կուզէ պատճառը գիտնալ: Վարպետը կը պատասխանէ. "Եթէ դուք ցանկացող մը չի լինիք, Տէր իմ, ժողովուրդը՝ կաշառելով իսկ՝ կարող չի պիտի լինիք այդպիսի փորձութեանց մէջ ձգել. ժողովուրդը իր լոյսը վերուստ կըստանայ":—Կատեմ այնպիսիները որոնք իրենց լեզուներով թագաւորութիւններ կը տապալեն, կամ ընտանիքներ կանգամալուծեն: Ես լուծիւն կը նախընտրեմ": Բայց, վարպետ, կըսէ աշակերտներէ մին, եթէ դուք չի խօսիք ինչպէ՞ս պիտի սորվինք մենք, կամ ինչպէ՞ս պիտի արձանագրենք ձեր խօսքերը: Վարպետը կը պատասխանէ —"Իթէ երկինք կը խօսի՞նք տեսէք ինչպէ՞ս չորս եւեղանակներ իրենց չըջանը կընեն և երկինքը բառ մը անգամ չի արտասաներ:— "Սպասուողներու հետ վարուիլը պժուար է. եթէ մտերմանաս՝ կըստորնանաս. եթէ իրենց կամքը չի կատարես՝ կը ձգեն կերթան":

"Մեր նախնիքը իրենց մեծամտութիւնը կը յայտնէին՝ անկարեւոր բաներու ուշադրութիւն չընելով. արդի մեծամտութիւնը յայտ կուզայ մեր համարձակ ամբարշտութեամբը: Նախնեաց խիստ վարքը առաջ բերած էր հանդիսաւոր չըջանայեացութիւն մը, արդի մեր խիստ վարքը յայտ կուզայ կոմսարսր խեղաթիւրուաներով: Նախնեաց յիմարութիւնը անկեղծութեամբ՝ արդի յիմարութիւնը լոկ խաբեբայութեամբ յայտ կուզայ:" Հարցման մը պատասխանելով՝ վարպետը կըսէ —"Երկնից ներքև հինգ բաներ կան որ կատարեալ առաքինի կընեն մեզ. լըլութիւն, հոգւոյ վեհանձնութիւն, անկեղծութիւն, հաստատումութիւն և նաև մարդասիրութիւն: Երբ լուրջ ըլլաս՝ չեն անպատուեր քեզ. եթէ վեհանձն ես՝ բոլոր սիրտերը կրնաս շահիլ. անկեղծ ես՝ ժողովրդի վստահութիւնը գրաւած կըլլաս:

եթէ հաստատումիս ես՝ ամեն մեծ ձեռնարկ կրնաս ի կատար հանել. եթէ մտրդասէր ես՝ կրնաս ուրիշներ ծառայեցնել քեզի: Բնականի մէջ զրէթէ նման ենք մենք, իսկ գործնականին մէջ ահագին անջրպետ մը կայ մէջերնիս:— Կատարեալ մարդը երեք բաներէ կը վախնայ. երկնից անօրինութիւններէն, մեծ մարդիկներէն և գիտնականներէն:— Անոնք որ խմաստուն ծընած են՝ առաջի կարգի մարդիկ են. անոնք որ խմաստութիւն կուսանին ու կը գործադրեն՝ երկրորդ կարգի են. անոնք որ պինդ գլուխ ու տխմար են ու կը ջանան ուսանիլ՝ ուրիշ դաս մը կը կազմեն. իսկ անոնք որ պինդ գլուխ ու տխմար են և չեն սորվիր՝ անոնք են ամենաստորին արարածները: —Մեր նախնիք կուսանէին՝ իրենց կատարելութեան համար. արդի մարդիկ կուսանին՝ ուրիշները ծաղրելու համար:—

«Ազգաս ըլլալ ու չի արանջալ՝ դժուարին է, իսկ հարուստ ըլլալ ու չի հպարտանալ՝ դիւրին է: —Ինչ որ երկինք պարզեւած են՝ բնական է. բնութեան համաձայնիլը պարտականութիւն է. պարտականութեան կատարելագործումը ուսմունքն է:»

«Անպաշտօն անձ մը իրաւունք չունի պաշտօններու նկատմամբ ուղղութիւններ ցոյց ստալու: Անպաշտօն լինելու պարտիմ գիտութեան մեծ մասը:» — Երախաները յարգելու եմք միշտ, զի ո՛ր գիտէ թէ նա կանչուած չէ մեծ մարդ մը ըլլալ. իսկ եթէ 50 տարեկան հասակին մէջ առաւելութիւններ ցոյց չի տայ՝ անօգուտ է անով զբաղիլ:— 'Կեանքն ու մահը իրենց որոշ կոչումները ունին, իսկ հարստութիւն և պատիւ՝ երկնից շնորհներէն կախում ունին:— 'Մարդ մը կը սիրես և կը փափաքիս որ սպրի, մարդ մը չես սիրեր ու կը փափաքիս որ մեռնի: Այդ փափաքներուց երկուքն ալ ցնորքներ են:»

Փան Չը հարցուց փարպեաին թէ ի՞նչ է բարեգործութիւնը. «Բոլոր մարդիկ անխտիր սիրելն է» պատասխանեց: Նոյն անձը կը հարցունէ թէ ի՞նչ է գիտութիւնը. վարպետը կը պատասխանէ — Գիտութիւն ամեն մարդու ճանչնալն է: Չի հասկցայ, կըսէ Փան Չը. «Ուրեմն, կը պատասխանէ վարպետը, արդարութիւն գործէ ու խարդախութիւնը փանէ. այս կերպով խարդախը արդար կըլլայ:»

—Ի՞նչ ըսել կուզես, կը հարցունէ Փան Չը: —Հաւատարմութեամբ յանդիմանէ բարեկամը, կը պատասխանէ վարպետը, և մարդասիրաբար առաջնորդէ զինքը դէպի բարին. երբ անուղղելի գանես զինքը՝ կեցիր. մի խայտառակեր դու գեղ:»

Յը Լու կը հարցունէ ի՞նչ է կառավարութիւնը: —Բարի օրինակներովը ժողովուրդիդ գնա՛, կը պատասխանէ վարպետը, և ժրաշան եղիւր անոնց բարելաւութեան համար: \*

**ԵՆՈՐՀԱՎԱԼՈՒԹԵԱՆ ՕՐԸ**

Հայ Երեցական Եկեղեցւոյ մէջ տօնուեցաւ անցեալ օր Ենորհակալութեան օրը մեծ բազմութեան մը ներկայութեամբ: Ատենախօսներ ն էին Տրք. Քրանեան, Մ. Մինասեան, Փրօֆ. Մելգոն և Փրօֆ. Մալարեան,

որք բացատրեցին այդ օրուան նշանակութիւնը: Ընտիր կտորներ նուագեցին Օր. Բօզ Ֆիլեան, Տիկն. Վիքթորիա Աւաքելեան և Պ Կակոսեան: Հայերէն և անգղիերէն երգեր երգուեցան: Մրգեղէններ և շաքարեղէններ բաշխուեցան ժողովրդեան:

**Առեւտրական Կոտորած**  
**Ա. ԸՄԹԱՔ**  
**Հանդերձախաւառ**

Թանքակիվինկի առթիւ՝ գները կէսի բաժնուած են: 1027 ձէյ փողոց, — — — Ֆրէզնօ, Քալ.

**ԳՆԱ ԱՌ**  
**ՊԱՐՐԷԹ ՀԻՔՍ ԸՆԿ.**  
ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ, ՊՈՂՊՍՏԵԱՅ ԲԱՆՉԵՐՈՒ,  
ՆԵՐԿԻ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ՀՄՄԱՐ  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՐԿԱԹԵՂԷՆ**  
1035-1044 ԱՅ ՓՈՂՈՅ ԹԷԼԷՑՈՆ  
ՖՐԷՉՆՅՈՒՔԱԼ ԷՐԷՅԷՆ — ԹԻՒ 2

**ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄ**

Կիլիկիոյ Լեւոն և Հեթում Թագաւորներու այլ և այլ դրամներ: Հայոց հին փառաց այս կենդանի յիշատակներէն կալժէ որ ամեն Հայ ունենայ: Ծննդեան համար ամենափափաքելի նուէր: Հեթում Թագաւորին դրամներուն (արծաթեայ) իւրաքանչիւրը մէկ տօլար: Լեւոն Թագաւորին դրամներուն (արծաթեայ) իւրաքանչիւրը երկու տօլար: Կիլիկիոյ այլևայլ պղնձեայ դրամներ, իւրաքանչիւրը 50 սէնթ: Դրամները առանց ծակի են: Գնել փափաքողները զիմելու են հետեւեալ հասցէին  
Paul S. Ourfalian,  
336 S.Olive St ; Los Angeles, Cal.

**DR. GAZARIAN DENTIST**

**Տրք. Յ. Ղազարեան,**  
ԱՏԱՄՆԱԳՈՐԾ ԵՒ ԱՏԱՄՆԱՐՈՅԺ  
Չանա Պլաք, ԱՅ Ըսթրիթ, Ֆրէզնօ, Քալ.  
Գոհացուցիչ և առաջնակարգ գործ: Կատարեալ գոհացում Յաճախորդներուն: Գիները միշտ շափաւոր: Թէլէֆօն — — — — Ուայթ 231